

Երեխաների դաստիարակությունը տարբեր երկրներում

Բոլոր ծնողներն էլ երբեմն մտորում են, թե արդյոք ճիշտ են դաստիարակում իրենց երեխաներին: Այդ հարցում ինչ սկզբունքներով են առաջնորդվում մայրերը տարբեր երկրներում: Դաստիարակության մեջ չկան հաստատագրված կանոններ: Յուրաքանչյուր ընտանիք ինքն է որոշում, թե իր երեխայի համար ինչն է լավագույնը: Սակայն որոշ ավանդույթներ տարբեր երկրներում դեռևս կան: Սովորաբար տարբեր երկրներում մարդկանց մենտալիտետը խիստ տարբեր է լինում, ինչն էլ չի կարող չանդրադառնալ դաստիարակչական նորմերի վրա:

Կորեացիները համոզված են, որ մինչև 7 տարեկան երեխային պետք է փայփայել: Նրանք թույլ են տալիս երեխային վայելել կյանքը մինչև կգա ուսումնառության եւ աշխատանքի պահը: Հիմնականում ծնողները փայփայում են տղա երեխաներին ու նրանց վրա ավելի շատ գումար են ծախսում՝ համարելով դա շահավետ ներդրում: Աղջիկների բախտն այստեղ ավելի քիչ է բերել: Ծնողները նպատակահարմար չեն գտնում նրանց վրա գումար ծախսել, քանի որ 12 տարեկանից աղջիկը կարող է ամուսնանալ եւ լքել ընտանիքը:

Անգլիացիները դաստիարակում են իրենց երեխաներին խստության մեջ, սովորեցնում են չտրվել էմոցիաներին, լինել կայուն և զուսպ: Մինչև XX դարի վերջն այս երկրի բազմաթիվ դպրոցներում կիրառվում էր մարմնական պատիժը, որը համարվում էր ամենակարեւոր եւ արդյունավետ միջոցը երեխային բացատրելու, թե ինչպես պետք է իրեն պահել: Մինչ օրս անգլիացի մայրերը կարծում են, որ պետք չէ երեխաներին շատ փայփայել, քանզի հետագայում դժվար կլինի հարմարվել իրական կյանքին: Մանկուց երեխային սահմանափակում են պահանջների լայն շրջանակով: Ծնողները շատ զուսպ են իրենց էմոցիաների արտահայտման հարցում և ընդհանրապես երեխաներին երես չեն տալիս:

Հնդիկները համարում են, որ ամեն ինչի հիմքում բարությունն է: Հիմնական պահանջը երեխաներից՝ լինել բարի ու կարեկից երկրի վրա ապրող ամեն մի կենդանի արարածի նկատմամբ՝ լինի դա կենդանի, թռչուն եւ նույնիսկ բույս: Սա է ներդաշնակության ու երջանկության միակ ճանապարհը: Հնդիկ երեխաների դաստիարակությամբ սկսում են զբաղվել դեռ ծնված օրվանից: Գլխավոր հատկանիշները, որ ցանկանում են սերմանել երեխաների մեջ, շրջապատի հանդեպ բարի վերաբերմունքն է և զայրույթի զսպելու կարողությունը:

Երեխաներին հաճախ են գովում, քանի որ համարվում է, որ դա օգնում է երեխային ինքնավստահ լինել:

Գերմանիա Գերմանիայում երեխաները մինչև 3 տարեկան ստանում են տնային դաստիարակություն: 4 տարեկանում երեխան սկսում է հաճախել հատուկ խաղային խումբ, որտեղ սկսում է շփվել այլ երեխաների հետ: Դրանից հետո նա հայտնվում է մանկապարտեզում: Ծնողների համար երեխայի՝ դպրոց հաճախելու պատրաստ լինելը որոշվում է հասակակիցների հետ հարաբերություններ հարթելու կարողությամբ:

Ֆրանսիական դաստիարակության համակարգի գլխավոր առանձնահատկությունը երեխաների վաղ սոցիալականացումն ու ինքնուրույնությունն է: Ֆրանսիական մանկապարտեզներում պատրաստ են ընդունել նույնիսկ 2-3 ամսական երեխաներին, իսկ կանայք հաճախ պարզապես երագում են երեխայի խնամքով զբաղվելու և աշխատանքի չգնալու մասին:

Չնայած երեխաների հանդեպ իրենց հոգատարությանն ու սիրուն՝ ֆրանսիացի ծնողները կարողանում են «ոչ» ասել: Նրանք երեխայից կարգապահություն ու հնազանդություն են պահանջում, իսկ անկարգ երեխային «ուշքի բերելու» համար հաճախ բավական է լինում ընդամենը մեկ հայացքը: Ֆրանսիացի երեխաները միշտ օգտագործում են «կախարդական բառը», հանգիստ սպասում են ճաշին կամ խաղում են խաղահրապարակում, մինչ ծնողները զրուցում են: Փոքրիկ անկարգությունները ծնողներ սովորաբար անտեսում են, սակայն լուրջ արարքների համար պատժում են՝ զրկելով քաղցրավենիքից, նվերներից կամ խաղերից:

Առհասարակ ֆրանսիացի երեխաները շատ հնազանդ են, հանգիստ ու ինքնուրույն: Խնդիրներ կարող են առաջանալ միայն փոքրիկին մշտապես անուշադրության մատնելու դեպքում:

Իտալիայում երեխաներին պարզապես պաշտում են ու աստվածացնում: Ընդ որում՝ ոչ միայն ծնողները, այլև բոլոր հարազատները, բարեկամները և նույնիսկ պատահական անցորդները: Այստեղ օտար երեխային շոյելն ու գուրգուրելը լիովին նորմալ է համարվում: Այստեղ երեխաները մանկապարտեզ են հաճախում երեք տարեկանից, իսկ մինչ այդ անընդհատ գտնվում են ծնողների, տատիկների ու պապիկների և առհասարակ բոլոր հարազատների հսկողության տակ: Իտալացիները երեխաներին շատ վաղ են ընտելացնում սոցիալական կյանքին՝ միասին հաճախելով թատրոններ, համերգասրահներ, ռեստորաններ և այլ

հասարակական վայրեր: Այստեղ փոքրիկին նկատողություն անելը կամ առավել ևս հարվածելն անթույլատրելի պահվածք է ծնողի համար, քանի որ իտալացիները վստահ են, որ նման վերաբերմունքի դեպքում երեխան կբարդությաւորվի: Մակայն նման ռազմավարությունը հաճախ շատ վատ հետևանքներ է ունենում. լարժեք ամենաթողության հետևանքով երեխաները հաճախ անգամ պատկերացում չեն ունենում պարկեշտության համընդհանուր կանոնների մասին:

ԱՄՆ

Ամերիկացիները տարբերվում են իրենց ներքին ազատությամբ և բոլոր օրենքներին հետևելու ունակությամբ: Ամերիկացի ծնողները, անկախ ամեն ինչից, միշտ իրենց երեխաների կողքին են: Նրանք միշտ հետաքրքրվում են փոքրիկի խնդիրներով ու հպարտանում նրա հաջողություններով:

Այստեղ դեռ փոքր հասակից երեխային սովորեցնում են հանդուրժող լինել ու հեշտ ընտելանալ: Ամերիկյան դաստիարակության համակարգի հիմնական առավելությունն ազատությունը, հավասարությունն ու գործնականությունն է:

Ամենուր բացասական երևույթ հանդիսացող «խաբարբզանությունն» այստեղ համարվում է օրինապահություն, քանի որ օրենքը խախտելու մասին համապատասխան մարմիններին հայտնելը լրիվ նորմալ ու բնական երևույթ է համարվում:

Մարմնական պատիժներն այստեղ դատապարտելի են, իսկ եթե երեխան բողոքի ու ապացույցներ ներկայացնի, ապա մեծահասակների արարքը կգնահատվի որպես հանցանք և կունենա բավական լուրջ հետևանքներ: Ամերիկացի ծնողները որպես պատիժ հաճախ կրառում են «թայմ-աութի» մեթոդը. նրանք պարզապես խնդրում են երեխային լուռ նստել և մտածել իր սխալ պահվածքի մասին:

Դանիա

Դանիայում երեխաներին դաստիարակում են հավասարության և լիակատար ազատության մթնոլորտում: Մանկուց երեխան ընտանիքի լիիրավ անդամն է, ով ունի սեփական կարծիքը և կարող է մասնակցություն ունենալ բազմաթիվ հարցերի լուծմանը: Դաստիարակության գլխավոր մեթոդը համարվում է խաղը ուստի դանիական մանկապարտեզները համալրված են բազմապիսի խաղային ծրագրերով:

Երեխաների դաստիարակությունը շատ պատասխանատու ու լուրջ գործընթաց է, որին ոչ բոլոր ծնողներն են պատրաստ լինում: Երբեմն հենց ծնողների կիրառած դաստիարակչական մեթոդներն են մեծ մասամբ որոշում հետագայում փոքրիկի բնավորության գծերի մի մասը: Ծնողների դաստիարակությունը կարող է երեխային հանձար դարձնել կամ վերածել բարդույթավորված ու չարացած մեծահասակի: Միայն դաստիարակությունը կարող է մեկընդմիջտ կործանել ոչ միայն տվյալ երեխայի, այլև հետագայում նրա շրջապատում հայտնված շատ ուրշների կյանքը, ուստի այս հարցին հարկավոր է ամենայն լրջությամբ ու պատասխանատվությամբ մոտենալ:

Ամենուր կարելի է լսել՝ «երեխաները մեր ապագան են», «երեխաների համար՝ ամեն ինչ», «ինչ անում ենք, անում ենք մեր երեխաների համար» եւ այլ արտահայտություններ: Սակայն, ամեն ինչ երեխաների համար անելու ցանկությամբ ծնողներն այնպիսի սխալներ են թույլ տալիս նրանց դաստիարակության հարցում, որ դրանք կարող են ճակատագրական լինել թե իրենց, թե երեխաների կյանքում:

Ուստի, պետք չէ երեխաների համար ամեն ինչ անել, բավական է նրանց ճիշտ դաստիարակել, ինչը կերաշխավորի թե երեխայի՝ իր կյանքում տեղը գտնելը, կայանալը, թե ծնող-երեխա բարիդրացիական եւ փոխադարձ երախտագիտական հարաբերությունները:

Երեխա դաստիարակելիս հայ ծնողների, մասնավորապես՝ մայրերի թիվ մեկ սխալը **գերխնամքն** է: Ծնողը ուզում է, որ երեխան շատ ուտի, որ երեխան չմրսի, որ երեխան ամեն ինչ ճիշտ անի՝ փողոցը ճիշտ անցնի եւ այլն: Հատկապես մեր մայրերը սուպերմայրեր են, չափից դուրս մայր են, նրանց հիմնական չափանիշը երեխային բամբակի մեջ պահելն է, այն դեպքում երբ դաստիարակության իմաստը երեխային ինքնուրույն դարձնելն է:

Գերխնամքը կարող է հանգեցնել բավական լուրջ խնդիրների, օրինակ՝ երեխան դառնում է անինքնուրույն, ներոտիկ, ծայրահեղ դեպքում կարող է նույնիսկ հոգեկան ծանր հիվանդության պատճառ դառնալ:

Հայ ծնողների հաջորդ սխալն **երեխաների փոխարեն որոշումներ կայացնելն** է: «Ծնողներն են ծրագրավորում երեխաների կյանքը, նրանք են որոշում, թե երեխան ում պետք է սիրահարվի, ինչ մասնագիտություն պետք է ընտրի, մինչդեռ ոչ ոք մյուսի փոխարեն չի կարող որոշել եւ առավել եւս՝ կրել այդ որոշման պատասխանատվությունը, դրա հետեւանքները անդառնալի են լինում:

Ի դեպ, ծնողները եւ երեխաները հոգեբաններին ամենաշատը դիմում են հենց Մյուս սխալը, որ թույլ է տրվում հայ ծնողների կողմից, **ավտորիտար դաստիարակությունն** է, այսինքն՝ երբ ծնողը միշտ ճիշտ է, իսկ երեխան՝ միշտ սխալ:

Հայ ծնողների կողմից թույլ տրվող կարելու սխալներից է նաև երեխայի բոլոր կամակորությունները, ցանկությունները կատարելը, եւ դա անում են ոչ թե երեխայի համար, այլ ինքնահաստատվելու համար: «Օրինակ՝ 16 տարեկան երեխային մեքենա են գնում, ի՞նչ է, թե ասեն, որ տես մենք հարեւանից լավ ծնող ենք՝ ինքը մեքենա չի գնում երեխայի համար, մենք գնում ենք: Մինչդեռ հայ ծնողները պետք է հասկանան, որ պահանջմունքի առաջացման եւ դրա բավարարման միջեւ պետք է ընկած լինի տանջանքը:

Երեխաների դաստիարակության հարցում թույլ տրվող սխալներից է նաև հակասական դաստիարակությունը, երբ հանկարծ երեխայի բոլոր կամակորությունները կատարել են, իսկ այժմ չեն անում եւ երեխայի մոտ հարց է առաջանում, թե ինչու է այդպես:

Հայ հասարակության մեջ հայրերը չեն զբաղվում երեխաների դաստիարակությամբ, նրանք ընկալվում են որպես ընտանիքին կերակրող ձեռք, դրսի մարդ, իսկ երեխաների դաստիարակության հետ գործ չունեն:

Ինչ վերաբերում է տատիկ-պապիկներին, ապա նրանք երեխաներին երես տալով, նրանց բոլոր քահաճույքները բավարարելով, փորձում են դիվիդենտներ ձեռք բերել, երեխաներին իրենց կողմը գրավել, նրանցով իմաստավորել իրենց կյանքը: «Իրենք իրենց կյանքն իմաստավորելու եւ իրենց պիտանի զգալու համար ինքնահաստատվում են երեխաների դաստիարակության վրա, կարծես կաշառք են տալիս երեխաներին, որ կապվեն իրենց հետ եւ հետագայում նրանց խնամեն: Նա խորհուրդ է տալիս տատիկ, պապիկներին՝ որպես դաստիարակության փորձառուներ, խորհուրդ տալ իրենց երեխաներին՝ ինչպես ճիշտ դաստիարակել թոռներին, ոչ թե փորձել նրանց իրենց կողմը գրավել եւ նրանց սերը շահելու հարցում մրցության մեջ մտնել երեխայի ծնողների հետ: